ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Մեսրոպ Մաշտոցն ասաց՝ որդիս,
Էլ ինչո՞վ ես յոյսը բերդիս,
Էլ հայրենիք ինչո՞ւ եկար,
Երբ կը խօսես օտար լեզուով,-
Խմես հայոց գինին նեկտար՝
Կենաց կանչես օտար ելզուով,
Քաղես հայոց վարդերն ու հեզ
Աղջիկ կանչես օտար լեզուով.
Բայց աղջիկը փուշ կը տայ քեզ,
Թէ պաչպչես օտար լեզուով։

Իրաւ, քանի լեզու գիտես՝
Այնքան մարդ ես՝ իրաւն ասին,
Բայց որ քո հայ լեզուն չունես,
Էլ ի՞նչ յոյս ես քո Մասիսին,
Որ թաղել ես քո մայրենին՝
Հարամ է քեզ հայոց գինին,
Հարամ է քեզ աղջիկն հայոց,
Հայոց սիրտը՝ Մասիսն հայոց,
Մայր հայրենիքն էլ ի՞նչ սրտով
Քո ոտքերն էլ գրկէ վարդով...

...Ախ չէ, Մասիսն հալալ է քեզ,
Հայոց վշտում դու մեղք չունես,
Հալալ է քեզ հողն հայրենի,
Թող քեզ ջուրն էլ դառնայ գինի,
Քանզի՝ ասա էլ՝ այս քառսում՝
Օտարն հայոց մահն է ուզում...
Բայց նա է հայ, ով յովազի
Արնախում էլ
Երախում էլ
Իր մայրենի լեզուով խօսի,
Մօր կաթի հետ ծծած լեզուով,
Որ հայ գետը ծով ծնի, ծով։
Ժխորում էլ Բաբելոնի
Խօսի լեզուով իր մայրենի.
Հայոց լեզուով, որ միշտ ջահել,

digitised by A.R.A.R.@

Մեզ բիւր դարեր հայ է պահել,
Մեր սուրբ լեզուն, որ իբրեւ սար՝
Ողջ ազգերին է հաւասար։
Մեր ողնաշար, մեր ազգի սիւն,
Չնաշխարհիկ հայոց լեզուն,
Որ մշտավէս
Մասիսի պէս՝
Ընդդէմ ձուլման աճ ու մահի՝
Մեզ յաւիտեան հայ կը պահի,-
Թէպէտ կտրել են դեռ ուզում
Հայ բերանից հայոց լեզուն,
Բայց չի մտնի օտար պատեան
Հայոց լեզուի թուրն յաւիտեան,
Պիտի երգէ,
Միշտ կայծակէ
Մեծ Մաշտոցի բազուկն անգին՝
Հայոց լեզուն Թուր-Կայծակին։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՇԻՐԱԶ

digitised by A.R.A.R.@